

ԲԱՐՁՐԱԳՈՑՆ ՄԱՆԻՖԷՍՏ

Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչի մահուան մասին.

«Աստուծոյ ողորմութեամբ, Մենք, Նիկոլայ Երկրորդ, Կայսր և Ինքնակալ Համայն ռուսաց, Ցար լեհաց, Մեծ Իշխան Ֆինլանդիայի և այլն. և այլն, և այլն, յայտնում ենք Մեր բոլոր հպատակներին, որ Ամենակարող Աստուծոյ կամքով Մեր Կայսերական տանը դարձեալ պատեց սուգ,—Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչը երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանուեց այս դեկտեմբերի 5-ին Ֆրանսիայում Կանն քաղաքում 78 տարեկան հասակում.

«Ողբալով Մեր պապի սիրելի եղբօր կորուստը, որի կեանքը նուիրուած էր Գահի և հայրենիքի անձնուրաց ծառայութեանը և յաւերժացած է իւր պանծալի անուան վաստակած քաջագործութիւններով, Մենք հաւատացած ենք, որ Մեր հաւատարիմ հպատակները իրանց աղօթքները կը միացնեն Մեր աղօթքների հետ հանգուցեալ Մեծ Իշխանի հոգու հանգստեան համար».

Տրուած է Լիվադիայում, դեկտ. 5-ին 1909 թ., Մեր թագաւորութեան 16-րդ տարում. Իսկականի վրա Ն, Կ, Մ. ձեռքով ստորագրուած է՝ «ՆԻԿՈԼԱՅ».

ՄԵԾ ԻՇԽԱՆ
ՄԻԽԱՅԻԼ ՆԻԿՈԼԱԵՎԻՉ
ՀԱՆԳԵԱՒ Ի ՏԷՐ

Դեկտեմբերի 5-ին, 5 ժ. 30 բոպէին ճաշից յետոյ,
Կանն քաղաքում։

Հանգուցեալ Մեծ Իշխան Միքայիլ Նիկոլաևիչը Նիկոլայոս Ա. Կայսեր չորրորդ որդին էր և ծնուել է 1832 թ. ուրեմն 78 տարեկան էր։ Նա 1863 թուին նշանակուեց Կովկասի փոխարքայ և վարեց նոյն պաշտօնը մինչև 1881 թիւը։ Այս երկարժամանակեայ պաշտօնավարութեան մէջ իւր արդարասէր, մարդասէր և կարեկից յատկութիւններով սիրելի դարձաւ ոչ միայն իւր ստորադրեալ պաշտօնեաներին այլ և Կովկասի բազմազան ազգութիւններին։ Մեծ Իշխանի շնորհիւ Կովկաս ներմուծուեցին դատաստանական նոր կարգերը և տեղական լեզուներով գիւղական դատարաններն ու այլ նման հաստատութիւնները, որ մեծ դիւրութիւն էր ազգաբնակութեան համար։ Վերջնականապէս նուաճուեց Դաղստանը, ոչ միայն պետական և տեղական դպրոցների թիւը բազմացաւ, այլ այդ դպրոցները կանոնաւորուեցին և որոշ ուղղութիւն ստացան. սկսուեց յառաջադիմական շարժում. երկաթուղու և խճուղու նոր գծեր բացուեցին և երկրի տնտեսական ու վարչական կառավարութեան մէջ բարեփոխումներ եղան։ Այս պատճառով փոխարքայութիւնը թողնելուց յետոյ էլ Կովկասը չէր մոռանում իւր Մեծ Իշխանին, ինչպէս և Նորին Կայսերական Բարձրութիւնը՝ չէր մոռանում Կովկասը։

Մեծ Իշխանի մահուան բոթը լսելով Ս. Էջմիածնում՝ ամսիս 9-ն հանդիսաւոր ս. պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարուեց, որին հանդիսադիր էր Վեհափառ Հայրապետը, ներկայ էին ամբողջ միաբանութիւնը և ժողովրդի ու աշակերտների խուռն բազմութիւն։

Հոգեհանգստից յետոյ Վեհափառ Հայրապետը վշտակցութեան հեռագիր ուղղեց Թագաւոր Կայսրին, Մեծ Իշխանի որդուն և Կովկասի փոխարքային, որոնցից և ստացաւ հեռագրական պատշաճ պատասխաններ։

Նոյին Սրբութիւնը բարեհաճեց Հանգուցեալ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչի յուղարկաւորութեանը իւր և իւր հօտի կողմից ներկայացուցիչ կարգել մագիստրոս Տ. Մեսրոպ եպիսկոպոսին յանձնարարելով արծաթեայ պսակ դնել դագաղի վերայ։

Յաւիտենական յիշատակն Մեծ Իշխանի օրհնութեամբ եղիցի. ամէն։